Հաշվետվություն

2019 թվականի հուլիսի 13-ից 21-ը Ճապոնիա (Տոկիո) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Լևոն Մելիքյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ճապոնիա, Տոկիո, 2019 թվականի հուլիսի 13-ից 21-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   29-րդ Քարտեզագրական միջազգային գիտաժողովի կազմակերպչական կոմիտե:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Քարտեզագրության համաշխարհային ասոցիացիայի 18-րդ Գլխավոր ասամբլեային, 29-րդ Քարտեզագրական միջազգային համաժողովին և «Աղետների ռիսկի նվազեցման մարտահրավերները քարտեզագրության համար Մեծ տվյալների դարաշրջանում» աշխատահավաքին:

6. **Քննարկված թեմաները.**
   Քննարկվեցին օրակարգով նախատեսված հետևյալ հարցերը.
   - Տեղագրական քարտեզների ստեղծման ավտոմատացված համակարգերը,
   - Տարածական տվյալների ենթակառուցվածքների ստեղծման և կիրառման փորձը տարբեր երկրների օրինակով,
   - Երկրատարածական տվյալների շարունակական թարմացման օրինակները,
   - Աղետների ռիսկերի գնահատումը և կանխորոշումը մեծ տվյալների առկայության պարագայում,
   - Աղետների սիմուլյատիվ խաղարկումը երկրատարածական արհեստական թվային միջավայրում:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**
   ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պատվիրակության կազմում է եղել նաև Կոմիտեի գեոդեզիայի և քարտեզագրության վարչության պետ Արտակ

Փիլոյանը:
Հանդիպումներ են տեղի ունեցել Քարտեզագրության համաշխարհային ասոցիացիայի նախագահ Մենո-Յան Կրաակի հետ, Վաղ ազդարարման ու ճգնաժամային իրավիճակների քարտեզագրման հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Միլան Կոնեչնիի հետ և «ESRI Swiss» կազմակերպության մասնագետ Մարկ Վիգլիի հետ:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Հուլիսի 15-ին և 20-ին տեղի է ունեցել Քարտեզագրության համաշխարհային ասոցիացիայի 18-րդ Գլխավոր ասամբլեան: Ասամբլեայի առաջին օրվա օրակարգում ընդգրկված մի շարք հարցերի հետ քվեարկության է դրվել նաև Հայաստանի Հանրապետության՝ ասոցիացիային ազգային անդամի կարգավիճակով անդամակցելու հարցը, որն անցել է միաձայն: Արդյունքում ՀՀ պատվիրակությունը ստացել է քվեարկության իրավունք և լիարժեք անդամի կարգավիճակով մասնակցել է ասամբլեայի հետագա աշխատանքներին: Հուլիսի 20-ին տեղի են ունեցել ասոցիացիայի նոր նախագահի, գլխավոր քարտուղարի, նախագահի տեղակալների և հանձնաժողովների ղեկավարների ընտրությունները և ասոցիացիայի 2019-2023 թթ. բյուջեյի հաստատման քվեարկությունը: Փակ քվեարկության արդյունքում նոր նախագահ է ընտրվել ԱՄՆ-ն ներկայացնող Թիմ Թրեյնորը, իսկ նոր քարտուղար՝ Շվեյցարիայի ներկայացուցիչ Թոմաս Շուլցը: Նաև միաձայն հաստատվել է ասոցիացիայի 2019-2023 թթ. բյուջեն:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները.**
Առաջարկում ենք Համաշխարհային քարտեզագրության ասոցիացիայի շրջանակներում տարածաշրջանային կոնֆերանս անցկացնել Երևանում՝ քարտեզագրության և երկրատարածական տեխնոլոգիաների հանրայնացման, ինչպես նաև քարտեզագրական և աշխարհագրական միջազգային ասպարեզում Հայաստանի Հանրապետության դիրքերի ամրապնդման նպատակով:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Լևոն Մելիքյան 24.07.2019 թ.